

## ԱՇՈՏ ԲԱՅԱԴՅԱՆԻ ՀԻՇՎՏԱԿԻՆ



Կյանքից հեռացավ անվանի գիտնական, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Հակոբի Բայադյանը:

Երկու տարի առաջ, երբ հիվանդությունը նոր էր գլուխ բարձրացնում, հարազատներին, մտերիներին ու ընկերներին հրավիրեց ծննդյան 70-ամյակի հանդիսությանը: Կարծես ամեն ինչ սովորական էր՝ շնորհավորանքներ, բաժակաճառեր, երգ, պար ... Այդ ամենը Աշոտ Բայադյանի տարերքն էր, բայց ծննդյան օրն ինքն իրեն գերազանցեց: Հաղթահարելով ցավ ու հոգնածություն, պարում էր... Պարում էր բոլորի՝ ընտանիքի անդամների, ընկերների, հարազատների ու գործընկերների հետ: Պարում էր ու աչքերի մեջ թախծալի ժպիտ կար, ապրելու և շրջապատին ուրախացնելու անհագ ծարավ ...

Դա ընդամենը երկու տարի առաջ էր... Այսօր, սրտի մորմոքով հրաժեշտ ենք տվել պայծառ մարդուն, նվիրյալ ամուսնուն, սիրված ծնողին, կենսուրախ ու զգայուն ընկերոջը, անվանի գիտնականին ու հմուտ մանկավարժին:

Նա ծնվել է 1946թ. հունիսի 2-ին, Սպիտակի շրջանի գեղատեսիլ Մեծ Պարնի գյուղում: 1965թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է 11-ամյա միջնակարգ դպրոցը, իսկ 1970թ.՝ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի «Տնտեսագիտական կիբեռնետիկա» բաժինը: Այնուհետև, ավարտել է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի հեռակա ասպիրանտուրայի «Վիճակագրություն» բաժինը և 1985-ին, պաշտպանելով թեկնածուական ատենախոսությունը, ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Նա հպարտանում էր, որ ատենախոսական աշխատանքը կատարել է ԽՍՀՄ գիտու-

թյունների ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Արոն Յա. Բոյարսկու գիտական ղեկավարությամբ:

2002թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ ստանալով տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան, իսկ 2004թ. ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՂ) կողմից նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում:

Աշխատել է տարբեր ոլորտներում: Բայց պրոֆեսոր Բայադյանին առավել հոգեհարազատ էր գիտական ու դասախոսական գործունեությունը: Շուրջ չորս տասնամյակ Հայաստանի ազգային ազրարային համալսարանում դասավանդում էր «Ֆինանսների ընդհանուր տեսություն», «Կազմակերպությունների ֆինանսներ» և «Բանկային մենեջմենթ» առարկաները: 1998թ. հոկտեմբերի 1-ից մինչ 2017 թվականը «Ֆինանսներ և վարկ» ամբիոնի վարիչն էր: Համատեղության կարգով աշխատել է նաև ՀՀ ԳԱԱ Մ. Զոթանյանի անվան տնտեսագիտական ինստիտուտում, որպես բաժնի վարիչ և «Ֆինանսներ և Էկոնոմիկա» ամսագրի գլխավոր խմբագիր:

Հրատարակել է 230-ից ավելի գիտական հոդվածներ, մենագրություններ, ուսումնական ձեռնարկներ, տնտեսագիտական բացատրական բառարաններ և մեթոդական ցուցումներ: Նա հանդիսանում է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտպանության խորհրդի անդամ: Նրա գիտական ղեկավարությամբ ատենախոսություն են պաշտպանել և գիտական աստիճան են ստացել մոտ չորս տասնյակ ասպիրանտներ ու հայցորդներ:

Փորձի փոխանակման նպատակով 1997-98թթ. եղել է ԱՄՆ-ի Ֆրեզնոյի համալսարանում, 2000թ. Լոնդոնի տնտեսագիտական թուեջում, 2001թ. Հոլանդիայի, 2005, 2008 և 2010թթ. Գերմանիայի ու Հունաստանի գյուղատնտեսական համալսարաններում:

2006 և 2010թթ. ՀՀ կրթության և գիտության ոլորտում ներդրած մեծագույն ավանդի համար, Հայաստանի պետական ազրարային համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ, պարգևատրվել է «Ոսկե հուշամեդալով»:

2014թ. և 2016թ. ՀՀ գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթի հաղթողներից է:

Բազմաժանտակ գիտնականի, նվիրյալ ընկերոջ, ազնիվ մարդու, ընտանիքի օրինակելի հոր կերպարը միշտ վառ կմնա:

**Սամվել ԱՎԵՏԻՍՅԱՆ**  
*Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*